

«Հաստատում եմ»

Հայաստանի պետական
տնտեսագիտական համալսարանի
ռեկտոր, տնտեսագիտության դոկտոր,
պրոֆեսոր՝
Բալոյան
«15» հունիսի 2022թ.



ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Հովհաննես Հարությունի Մելքումյանի՝ «Տնտեսության տարածքային անհամաչափ զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

Մասնակցում էին՝ «Մակրոէկոնոմիկայի» ամբիոնի վարիչ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Կ.Հ. Գրիգորյանը, տնտեսագիտության դոկտոր, դոցենտ, գիտության գծով պրոռեկտոր Թ.Մ. Մկրտչյանը, տնտեսագիտության թեկնածու, դոցենտներ Ծ.Զ. Կարապետյանը, Ա.Հ. Մուրադյանը, Ռ.Ս. Ղանթարյանը, Բ.Զ. Վարդանյանը, Գ.Ա. Ավագյանը, տնտեսագիտության թեկնածու, ավագ դասախոսներ Ա.Ս. Զանջոյանը, Վ.Ի. Տիգրանյանը, դասախոս Մ.Ա. Ղարազյոզյանը, լաբորանտ Մ.Ա. Արղությանը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ:

Ատենախոսության թեմայի արդիականությունը և ուսումնասիրվող հիմնախնդրի կարևորությունը կասկած չեն հարուցում, քանի որ զարգացման տարբեր փուլերում երկրները բախվում են բազմաթիվ մարտահրավերների, որոնցից է տարածքային անհամաչափ զարգացումը: ՀՀ ողջ տարածքում տնտեսական աճն ու կայուն մարդկային զարգացումը խոչընդոտվում են ոչ միայն սոցիալական և տնտեսական զարգացման մակարդակների շեղումներով ու անհամաչափություններով, մարզերի բնակլիմայական տարբերություններով, արտադրական ու բնական ռեսուրսների անհամաչափ բաշխմամբ, այլ նաև ապակենտրոնացման թույլ հիմքերով: Ներկա իրավիճակի գիտական վերլուծությունը, համապատասխան ցուցանիշների սահմանումը կառավարությանը ախտորոշելու, համեմատելու և տարածքային կարգավորման շրջանակները բարեփոխելու, ինչպես նաև նախկինում իրականացված բարեփոխումների արդյունավետությունը գնահատելու հնարավորություն կտան: Դրանք թույլ կտան պարզել՝ արդյոք տարածքային զարգացման անհամաչափությունները ազդում են տնտեսական կայունության վրա և ինչ հնարավորություններ են ստեղծվում դրական ազդակների ուժեղացման և բացասականների չեզոքացման համար:

Հայաստանի Հանրապետությունը մշտապես բախվում է տարածքային անհամաչափ զարգացման հիմնախնդրին, որը տնտեսական կայունությանը սպառնացող գործոն է: Ուստի, արդիական է տարածքային անհամաչափ զարգացման հիմնախնդրի համակողմանի հետազոտության իրականացումը, ՀՀ-ում դրա սոցիալ-տնտեսական հետևանքների և բնակչության կենսամակարդակի փոխազդեցության, այդ փոխազդեցության կառավարման հիմնախնդիրների բացահայտումը, հատկապես, որ ՀՀ-ում իրականացվող վարչատարածքային բարեփոխումները, թեև ուղղված են բնակչության կենսամակարդակի բարձրացմանը, սակայն, եկամուտների բևեռվածությունը, տնտեսական զարգացման անհամաչափությունների զգալի մակարդակը փաստում են սոցիալական հիմնախնդիրների մասին: Տնտեսական ինտեգրման գործընթացները, որոնք ընթանում են փոփոխվող միջավայրում, անորոշությունը, տնտեսության բոլոր բնագավառներում տնտեսական հակասությունները և երբեմն տարբեր որոշումների անհամապատասխանությունը համայնքային շահերին

պատճառ են դառնում անհամամասնությունների ձևավորման և ազգային տնտեսության անկայունության: Կարևոր է դառնում տարբերակել բոլոր այդ գործոնները և ուսումնասիրել տնտեսական կայունության վրա դրանց ազդեցության շրջանակները:

Հեղինակը հետազոտության թեմայի արդիականությունը հիմնավորելու նպատակով նշել է, որ անհամաչափ զարգացման ազդեցությունը մեղմելու համար անհրաժեշտ է վերանայել տնտեսության բոլոր հատվածներում գործող տնտեսական մեխանիզմներն ու լծակները, իրականացնել հետևողական քաղաքականություն, գործադրել արդյունավետ գործիքակազմ: Հեղինակը փաստում է, որ բազմաթիվ աշխատանքներ են կատարվել ինչպես օտարազգի, այնպես էլ՝ հայազգի հետազոտողների կողմից, ուղղված անհամաչափ տարածքային զարգացման մասշտաբների գնահատմանը և դրանց ազդեցության բացահայտմանը տնտեսության առանձին ոլորտների վրա, սակայն, գտնում է, որ տարածքային անհամաչափ զարգացման ազդեցության գնահատման հարցում դեռևս չկա մեկ միասնական մոտեցում:

ՀՀ-ում առկա մարտահրավերները ներկայացնում են նոր, ավելի մեծ պահանջներ տեղական ինքնակառավարման համակարգի հետագա զարգացման և կատարելագործման նկատմամբ, ինչը կարող է ապահովվել ապակենտրոնացման և ժողովրդավարացման գործընթացների ակտիվացմամբ: Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի սկզբունքներին համապատասխան տեղական ինքնակառավարման համակարգ ձևավորելու և այն զարգացնելու համար մեծ նշանակություն ունի համայնքների ինքնուրույնության և ֆինանսական անկախության մակարդակի բարձրացումը: Դրա համար համայնքները պետք է բավականաչափ ապահովված լինեն սեփական գույքով և բյուջետային միջոցներով: Դրանց առավել մեծ ծավալներով և արդյունավետ տիրապետմամբ, օգտագործմամբ ու տնօրինմամբ էլ ՏԻՄ-երը կարող են բնակչությանը մատուցել մատչելի ու որակյալ ծառայություններ: Հայաստանում իշխանությունը դեռևս զգալիորեն կենտրոնացած է ազգային մակարդակում, ինչը միշտ չէ, որ առավել արդյունավետ է և համապատասխանում է հատվածայնության ու բաշխման սկզբունքին:

Հասունացել է հանրային ծառայությունների կենտրոնացված ու ապակենտրոնացված եղանակների միջև նոր, առավել արդյունավետ հարաբերակցության սահմանման խնդիրը: Այդպիսի ռազմավարության հիմնական խնդիրներից են՝ տեղական ինքնակառավարման համակարգի ընթացիկ իրավիճակի վերլուծությունը, զարգացման հեռանկարային մարտահրավերների ու հնարավորությունների բացահայտումը, այս ոլորտում քաղաքականության միջազգային լավագույն փորձի ուսումնասիրումն ու տեղայնացումը, ապակենտրոնացման համակարգի զարգացման պետական քաղաքականության առաջնային ուղղությունների ու խնդիրների հստակեցումը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ:

Հետազոտության հիմնական նպատակն է միջազգային և հայրենական փորձի ուսումնասիրության հիման վրա բացահայտել ՀՀ տնտեսության տարածքային զարգացման անհամաչափությունները, գնահատել դրանց սոցիալ-տնտեսական հետևանքներն ու առաջարկել այդ անհամաչափությունների մեղմմանն ուղղված գործնական ծրագրեր: Այդ նպատակին հասնելու համար աշխատանքում առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները՝

- հետազոտել տնտեսության տարածքային զարգացման էությունն ու առանձնահատկությունները, ուսումնասիրել թեմային վերաբերող գիտական գրականությունը,
- ուսումնասիրել տարածքային զարգացման քաղաքականության արտերկրյա փորձը, գնահատել ՀՀ-ում դրանց ներդրման հնարավորությունները,
- համակարգային գնահատման ենթարկել համայնքների բյուջետային եկամուտները՝ ՏԻՄ-երին օրենքով ամրագրված լիազորությունների իրականացման համատեքստում,
- մշակել երկրների տարածքային սոցիալ-տնտեսական զարգացման քանակական գնահատման ընդհանրական համաթիվ,
- գնահատել ՀՀ տարածքային անհամաչափություններն ըստ զարգացման ոլորտային ուղղությունների,

- վերլուծել վարչատարածքային բարեփոխումների ծրագրի տնտեսական և հասարակական-քաղաքական նպատակահարմարությունը,
- առաջարկել համայնքների բյուջետային եկամուտների ամրապնդման բարեփոխումների ծրագիր՝ ուղղված ՏԻՄ-երի ֆինանսական ինքնուրույնության ապահովմանը,
- դիտարկել տարածքային համաչափ զարգացմանն ուղղված հիմնական կառուցակարգերը, գնահատել դրանց ներդրման կամ հետագա զարգացման հնարավորությունները, կատարել առաջարկություններ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՕՐՅԵԿՏԸ ԵՎ ԱՌԱՐԿԱՆ:

Հետազոտության օբյեկտը ՀՀ տնտեսության տարածքային զարգացման համակարգն է՝ անհամաչափությունների մեղմման առաջնահերթությունների համատեքստում: Հետազոտության առարկան՝ ՀՀ տնտեսության տարածքային զարգացման անհամաչափություններով պայմանավորված սոցիալ-տնտեսական հիմնախնդիրներն են:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ, ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ:

Հետազոտության համար տեսական հիմք են հանդիսացել տարածքային տնտեսության վերաբերյալ տարբեր տնտեսագետների գրքերը, գիտական հոդվածները, ինտերնետային կայքերը, ոլորտը կարգավորող օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերը:

Հետազոտությանն անհրաժեշտ տեղեկատվական հիմքերն են Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի, ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, հրապարակած զեկույցներն ու պաշտոնական վիճակագրությունը: Հետազոտության ընթացքում կիրառվել են վիճակագրական, համեմատական, տնտեսամաթեմատիկական, գիտական վերացարկման, գործոնային և ֆինանսական վերլուծության մեթոդները:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ և ՆՈՐՈՒՅԹԸ:

Ատենախոսության հիմնական արդյունքներն ունեն տեսական, մեթոդական և կիրառական նշանակություն, որոնց գիտական նորույթը կայանում է հետևյալում.

- ✓ Տարածքային զարգացման քանակական գնահատման միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքում մշակվել է ցուցանիշների համակարգ, որի հիման վրա հաշվարկվել են երկրների և նրանց առանձին տարածքների սոցիալ-տնտեսական զարգացումը բնութագրող ոլորտային ինդեքսներ: Դրանց հաշվարկման և վերլուծության արդյունքները ցույց են տվել, որ դիտարկվող երկրների մեծամասնությունում տնտեսական զարգացումը հանգեցրել է տարածքային անհամաչափությունների խորացմանը:
- ✓ Համայնքային բյուջեների եկամուտների ու ծախսերի վերլուծության արդյունքում իրականացվել է ՏԻՄ-երի ֆինանսական ապահովվածության քանակական գնահատում: Որոշվել է համայնքների ֆինանսական կայունության աստիճանն ու բացահայտվել են ազդող հիմնական գործոնները:
- ✓ ՀՀ մարզերի համար հաշվարկվել են տարածքային զարգացման ոլորտային ինդեքսներ՝ հիմք ընդունելով մշակված ցուցանիշների համակարգը: Արդյունքում՝ գնահատվել է ՀՀ սոցիալ-տնտեսական բևեռացման աստիճանը: Միաժամանակ, նույն ցուցանիշների հիման վրա իրականացվել է կլաստերային վերլուծություն, ինչի արդյունքում մարզերն ընդգրկվել են տարածքային սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակը բնութագրող չորս հիմնական խմբերում՝ ընդգծելով մայրաքաղաքի և Սյունիքի մարզի առաջատարությունը մնացած մարզերի նկատմամբ:
- ✓ Իրականացվել է վարչատարածքային բարեփոխումների ծրագրի տնտեսական արդյունավետության գնահատում, որի հիման վրա արձանագրվել է ինչպես ծախսերի տնտեսում, դոտացիաների ու սեփական եկամուտների որոշակի աճ, կառավարման մարմինների

հաստիքների արդյունավետ վերաբաշխում, այնպես էլ համայնքների խոշորացման հետ կապված մի շարք հիմնախնդիրներ, մասնավորապես՝ տեղական ինքնակառավարման համակարգի արդյունավետությունը, հանրային ծառայությունների և ենթակառուցվածքների հասանելիությունը, խոշորացված համայնքում ընդգրկված բնակավայրերի զարգացման համաչափությունը:

- ✓ Վերլուծվել են եկամտային հարկից և շահութահարկից մասհանումները՝ որպես համայնքային եկամուտների այլընտրանքային աղբյուրներ և ՏԻՄ-երի ֆինանսական ինքնուրույնության ապահովման հիմնական ուղղություն: Ներկայացվել է առաջարկվող բարեփոխումների ծրագրի ներդրման գործնական քայլերի նկարագրություն, որի երկարաժամկետ նպատակը հանդիսանում է ֆինանսական համահարթեցման դոտացիաների փոխարինումը հարկային մասհանումներից եկամուտներով և դրա արդյունքում՝ ինքնաբավ համայնքային տնտեսությունների ձևավորումը:
- ✓ Առանձնացվել են ՀՀ տարածքային համաչափ զարգացմանն ուղղված հիմնական կառուցակարգերը, գնահատվել են դրանց ներդրման կամ հետագա զարգացման հնարավորությունները, ներկայացվել են որոշ գործնական մոտեցումներ՝ ուղղված այդ հնարավորությունների կենսագործմանը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՓՈՐՁԱՐԿՈՒՄԸ և ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

Հետազոտության արդյունքները քննարկվել են ՀՀ Պետական կառավարման ակադեմիայում: Հետազոտության հիմնական արդյունքներն ու բովանդակությունը արտացոլված են հեղինակի հրապարակած 8 գիտական հոդվածներում՝ ՀՀ ԲՈԿ-ի պահանջներին համապատասխան և հրատարակման պահին ընդունելի հանդեսներում ու ժողովածուներում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԾԱՎԱԼԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունների և առաջարկությունների հատվածից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսության տեքստը շարադրված է 187 էջի վրա՝ ներառյալ գրականության ցանկը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ձևակերպվել է հետազոտության նպատակը, հստակեցվել են նպատակի իրագործման տեսանկյունից կարևորվող խնդիրների շրջանակը, հետազոտության օբյեկտն ու առարկան, հետազոտության տեսամեթոդական և տեղեկատվական հիմքերը, ներկայացվել են հետազոտության հիմնական գիտական արդյունքները և գիտական նորոյթը, ստացված արդյունքների գործնական նշանակությունը և օգտագործումը, փորձարկումը և հրապարակումները, ինչպես նաև ատենախոսության կառուցվածքը և ծավալը:

Ատենախոսության առաջին՝ «Տնտեսության տարածքային զարգացման հիմնական բնութագրերն ու առանձնահատկությունները» վերնագրված գլխում մեկնաբանվել են տնտեսության տարածքային զարգացման էությունն ու բովանդակությունը, տարածքային զարգացման միջազգային փորձը, տարածքային անհամաչափության հիմնախնդիրը երկրի սոցիալ-տնտեսական զարգացման համատեքստում: Հեղինակը նշել է, որ տնտեսական զարգացման տարածքային անհամաչափությունները գործում են ամենուր, անկախ երկրի զարգացման մակարդակից: Ներկայացվել են տարբեր երկրների ազգային տարածքային քաղաքականության առանձնահատկությունները և տիպերը: ԵԱՏՄ անդամ երկրների համար ընդհանուր առանձնահատկություն է նաև ըստ շրջանների եկամուտների անհավասար բաշխումը: Արդյունքում, անդամ պետությունների շրջանների զգալի մասում առկա է եկամուտների միջինից ցածր մակարդակ: Այս համատեքստում կատարվել է նաև կլաստերային վերլուծություն: Ներկայացվել են տարածքային զարգացումը բնութագրող ցուցանիշների համակարգի տարատեսակ մոտեցումներ: Հեղինակի կողմից մշակվել է այնպիսի ցուցանիշների համակարգ,

որի հիմքում դրվել է երկրի սոցիալ-տնտեսական զարգացման գործում դրանց ունեցած կարևորությունը: Յուրանիշներն առանձնացվել են հինգ հիմնական խմբերում: Հետազոտության վերջնական նպատակն է ցուցանիշների յուրաքանչյուր խմբի համար դրա բաղադրիչների հարաբերական կարևորությունը բնութագրող կշռային գործակիցների դուրսբերումն ու դրանց հիման վրա երկրի տարածքային սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտային համաթվերի հաշվարկը 18 երկրների համար:

Ատենախոսության երկրորդ՝ «Տարածքային զարգացման ընթացքն ու հիմնական դրսևորումները Հայաստանի Հանրապետությունում» գլխում ներկայացվել են ՀՀ վարչատարածքային բաժանման ինստիտուցիոնալ հիմքերը, տնտեսության տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման ֆինանսական ու ինստիտուցիոնալ խզման հիմնախնդիրները, տրվել է տարածքային անհամաչափ զարգացման գնահատականը, կատարվել է համայնքների խոշորացման գնահատում տարածքային համաչափ զարգացման համատեքստում: Քննարկվել են ՏԻՄ-երի լիազորությունների արժեքային հաշվարկի մոտեցումները, որպես համապատասխան մեթոդաբանության մշակման և կիրառման անհրաժեշտություն: Կատարվել է համայնքների բյուջետային ծախսերի վերլուծություն՝ ըստ առաջատար և առավել հետամնաց 20 համայնքների:

Հաշվարկվել են ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացումը բնութագրող առավել կարևոր ցուցանիշների հինգ հիմնական ոլորտային խմբերից յուրաքանչյուր խմբի բաղադրիչների հարաբերական կարևորությունը բնութագրող կշռային գործակիցներ, որոնց հիման վրա էլ երկրի տարածքային զարգացման համաթվեր:

Կարևորելով տարածքային կառավարման արդյունավետության բարձրացումը, ինչն ուղղակիորեն կապված է երկրի վարչատարածքային օպտիմալ կառուցվածքի ձևավորման հետ, ներկայացվել են տարբեր կարծիքներ: Ուսումնասիրվել է միավորված համայնքների բյուջետային եկամուտների կառուցվածքը՝ սեփական եկամուտների և պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների մասով:

Ատենախոսության երրորդ՝ «Տարածքային համաչափ զարգացման հիմնական կառուցակարգերը Հայաստանի Հանրապետությունում» գլխում ներկայացվել են

Ֆինանսական համահարթեցման կատարելագործման հիմնական ուղիները, տարածքային համաչափ զարգացմանն ուղղված սոցիալ-տնտեսական կառուցակարգերի ներդրման հիմքերը: Հաշվի առնելով այն, որ ՀՀ-ում գործող բյուջետային համակարգում առաջարկվող մոտեցմամբ հարկային մասհանումների իրականացման և դրանք համայնքային բյուջեներին փոխանցման մեխանիզմներ դեռևս չեն գործում, այս առումով, որպես լուծում է համարվել այդ ֆինանսական ռեսուրսներն ըստ համայնքների բաշխման՝ ֆինանսական համահարթեցման գործող սկզբունքների կիրառումը:

Ներկայացվել է նաև բյուջետային եկամուտների կառուցվածքը հնարավոր «աճի բևեռներում»՝ առանձնացնելով բարեփոխումների ծրագրի փորձնական փուլի իրականացման խոշոր քաղաքային համայնքները: Բացահայտվել է, որ գործնականում համայնքների մեծամասնությունում հնարավոր է այնպիսի իրավիճակ, երբ հավաքագրվող եկամտային հարկի ծավալները «չծածկեն» ֆինանսական համահարթեցման դոտացիաների մեծությունը, այդ պարագայում, եկամտային հարկից մասհանումը համայնքին պետք է իրականացվի ամբողջությամբ: Տարածքային զարգացման համաչափության ապահովման տեսանկյունից առավել մեծ նշանակություն է տրվել միջհամայնքային համագործակցության ուղղահայաց հարաբերությունների մոդելին:

Եզրակացությունների տեսքով ձևակերպված հետազոտության հիմնական արդյունքները և դրանցից բխող առաջարկությունները ներկայացվել են «Եզրակացություններ» բաժնում, բերվել են օգտագործված գրականության ցանկը և մեծածավալ հավելվածները:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ:

Ստորև ներկայացվում են ատենախոսության վերաբերյալ դիտողությունները՝

1. Ատենախոսության առաջին գլխի 1.1 հարցում հեղինակը տնտեսության տարածքային զարգացման էությունն ու բովանդակությունը անհրաժեշտ մակարդակով չի ներկայացրել, ինչն առաջացրել է 1.1 հարցի վերնագրի և բովանդակության որոշակի անհամապատասխանություն: Հեղինակը էջ 11-ում նշում է, որ մասնագիտական գրականության մեջ բնութագրվում են

«տարածք» և «տարածաշրջան» եզրույթները, սակայն, անդրադառնում է միայն «տարածաշրջան»-ի մեկնաբանումներին, ինչից պարզ չի դառնում, թե արդյոք ատենախոսը տարբերակում, թե՞ նույնացնում է այդ հասկացությունները:

Նույն հարցում, հեղինակը, գոնե խմբագրական տեսանկյունից, ոչ այնքան հաջող ձևակերպումներ է կատարում, այսպես. մի դեպքում զարգացման մակարդակ է համարում տարածաշրջանը /էջ 11/, մյուս դեպքում՝ համայնքը /էջ 15/, միաժամանակ նշելով, որ «համայնքը... բնակիչների հանրություն է...», առանց պարզաբանելու, թե նշվածները ինչպես կարող են «զարգացման մակարդակներ» համարվել:

Տնտեսության տարածքային զարգացման էությունն ու բովանդակությունը քննարկելիս հեղինակը կարող էր ընդլայնել ուսումնասիրության շրջանակները, կատարել գրականության ընդարձակ ակնարկ և դրանից ածանցվող տարբեր տեսակետների, կարծիքների, դպրոցների գիտական մոտեցումների և սեփական ընկալումների ամփոփում:

2. Երկրի և նրա առանձին տարածքների սոցիալ-տնտեսական զարգացման և համաչափության գնահատման մոտեցումների ուսումնասիրության արդյունքում ընտրված ցուցանիշների համակարգը, մեր կարծիքով, կարող էր առավել բնութագրական լինել, եթե տարածքների տնտեսական զարգացումը կամ համայնքի տնտեսական կյանքն արտացոլող այնպիսի ցուցանիշների համախումբ ընտրվեր, որոնք կարտացոլեին համայնքի սեփականության, զարգացման ծրագրերի կամ ֆինանսական ռեսուրսների կարևոր քանակական և որակական կողմերը:
3. Ներկայացված նորույթների ձևակերպումները հստակեցման, կատարված հետազոտության արդյունքներին համապատասխանեցման և առավել ամբողջական ձևակերպման կարիք ունեն: Այսպես, առաջին նորույթի ձևակերպման մեջ հեղինակը նշում է, որ «մշակվել է ցուցանիշների համակարգ...», սակայն, ատենախոսը ոչ թե մշակել, այլ հայտնի և կիրառվող ցուցանիշներից ընտրել է իրեն անհրաժեշտ ցուցանիշները, նույն նորույթի ձևակերպման վերջում հեղինակը նշում է, որ

«...տնտեսական զարգացումը հանգեցրել է տարածքային անհամաչափությունների խորացման», սակայն նշվածից կարելի՞ է արդյոք եզրակացնել, որ զարգացման բացակայությունը այդպիսի խնդիր չէր առաջացնի, իսկ երկրորդ նորույթի ձևակերպման մեջ հեղինակը գրում է. «Որոշվել է համայնքների ֆինանսական կայունության աստիճանը»՝ սակայն առանց որոշակիացնելու, թե ինչ նոր մեթոդաբանությամբ է դա հաշվարկվել: Չորրորդ ձևակերպված նորույթում հեղինակը իրականացրել է վարչատարածքային բարեփոխումների ծրագրի տնտեսական արդյունավետության գնահատում, նշելով նաև հանրային ծառայությունների և ենթակառուցվածքների հասանելիությունը, սակայն պարզ չէ, թե հետազոտությունում, հատկապես ինչ եղանակով կամ ինչ նոր մոտեցմամբ է սա բացահայտվել, գնահատվել և արձանագրվել: Վերջին նորույթում, ամենայն հավանականությամբ «գնահատվել են» ձևակերպումը պետք է փոխարինվի «ներկայացվել են» կամ համարժեք այլ արտահայտությամբ, ինչն իրապես կատարվել է աշխատանքում:

4. Ատենախոսության էջ 132-ում ներկայացնելով համայնքների բյուջետային եկամուտների կառուցվածքն ըստ ծագման աղբյուրների՝ հեղինակը, ամենայն հավանականությամբ, այլ եկամուտներ խումբը պետք է վերնագրեր ոչ հարկային եկամուտներ, ինչպես ընդունված է և ավելացնել վարչական իրավախախտումների համար ՏԻՄ-երի կողմից վարչական պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, վերոնշյալ դիտողություններով հանդերձ, Հովհաննես Հարությունի Մելքոնյանի՝ «Տնտեսության տարածքային անհամաչափ զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը ինքնուրույն կատարված աշխատանք է:

Ատենախոսությունը համապատասխանում է «Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ

կետի պահանջներին, իսկ հեղինակը, հաշվի առնելով մասնագիտական խորհրդում ատենախոսության քննարկման ընթացքում ներկայացումն ու հարցադրումների պատասխանները, կարող է հավակնել Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Սեղմագիրն իր բովանդակությամբ համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը:

Ատենախոսությունը քննարկվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում՝ որպես առաջատար կազմակերպության, մակրոէկոնոմիկայի ամբիոնի նիստում (14.06.2022թ. արձանագրություն թիվ 13):

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Մ.Ջ. Կարապետյան

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Ք.Ջ. Վարդանյան

տնտեսագիտության թեկնածու,
դոցենտ, ամբիոնի վարիչ

Կ.Լ. Գրիգորյան

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, Ծովինար Ջիվանի Կարապետյանի, Կարապետյանի թեկնածու, դոցենտ Քնարիկ Ջոնիկի Վարդանյանի և Կարապետյանի թեկնածու, դոցենտ, մակրոէկոնոմիկայի ամբիոնի վարիչ Կարեն Համլեյի Գրիգորյանի ստորագրությունների իսկությունը հաստատում եմ՝

ՀՊՏՀ գիտական քարտուղար
14.06.2022թթ.



Վ. Մ. Կարբինյան